թեանը եռանդով և աշխատութեամբ շարունակել իրանց գործը, ասելով, որ միջոցներն իրանք իրանց կը գան, երբ Թիֆլիսի հայ հասարակութիւնը իրաք կը համոզուի Ընկերութեան կատարած սուրբ գործի կարևորութեան մէջ։

Այն այցելութեան միջոցին Ընկերութեան Վարչութեան ատենապետուհի Իշխանուհի Բէհբութեանը այդ օրը իմանալով, որ Նորին Օծութիւնը, նախընթաց, այն է կիրակէ օրը նշանակած է եղել ընդունելու իւր մօտ Վարչութեան անդամներին, որդիական ներողութիւն խնդրեց, որ թիւրիմացութեամբ զրկուել են նոքա այդ բաղդից։ Վեհափառ Տէրը ժպտալով պատասխանեց Իշխանուհուն հետևեալը. «Ես, ի հարկէ, ներում են ձեզ, որ դուք չեկաք Ինձ մօտ, բայց Ինձ դուք չէիք ներիլ, եթէ ես չը գայի ձեզ մօտ»։

Վեհափառ Հայրապետի այցելութեան միջոցին ուսումնարանների շուրջը խռնուած էին բազմաթիւ արք և կանայք, որոնք անհամբեր փափագում էին Նորին Սրբութեան Աջն համբուրել և օրհնութիւնը վայելել։ Ամենքն էլ արժանացան իրանց բաղձանքին։

Միաբան Ս. Աստուածածնի եկեղեցւոյ Մեղրեցւոց Շուշի քաղաքի Բարեկ. Մինաս Քահանայ Մինաս Վարդապետեանց սկսած 1885 թուից ամ ըստ ամէ նուիրած է յօգուտ Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի և յանուն վանիցն սրբոց Յակոբեանց Երուսաղէմի հինգ հինգ ռուբլի, խոստանալով շարունակել զայն ցմահ իւր, որին Աստուած վարձահատոյց եղիցի։

ՊԱՏՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱՆՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Սեպտեմբերի 19 ին Ս. Սինոդն պատուիրեց Երևանայ Հայոց Կոնսիստորիային արձակել Մրենոյ վանուց վանահայրութեան պաշտօնից տիրացու Յակոբն Ղազանչեանց իւր անընդունակութեան և անհոգ ծառայութեան համար և նորա տեղն նշանակել վանահայր Խծկոնի վանուց Յակոբ Վարդապետն։